ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

"ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ХОРЕОГРАФИЧЕСКИЙ КОЛЛЕДЖ" ГНО

MINISTRY OF CULTURE OF REPUBLIC OF ARMENIA
"YEREVAN DANCING ART STATE COLLEGE" NCSO

Երևան, 375009, Բայրոնի փող. 5
Հեռ./ֆաքս՝ (374 10) 56-44-26

5 Byron St., Yerevan, 375009
Tel.:/ fax: (374 10) 56-44-26

Ереван, 375009, ул. Байрона, 5
Тел./факс: (374 10) 56-44-26

N 1/8-62-14
17.11.2014թ.

« ՇՀԱՊՁԲ-11/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ ԿՆՔԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ
(ըստ ցանկի)

Հարգելի մասնակից

«ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակում "Երևանի պարարվեստի պետական քոլեջ" ՊՈԱԿ-ի /այսուհետև Քոլեջ/ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք(ներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ԵՊՊՔ-ՇՀԱՊՁԲ-11/2-14»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Բայրոնի 5 հասցեով՝ "Երևանի պարարվեստի պետական քոլեջ" ՊՈԱԿ, 2-րդ հարկ, գլխ. հաշվապահ Ա. Համբարձումյանին՝ ոչ ուշ, քան 2014 թվականի նոյեմբերի 27-ը, ժամը 14:00-ն:

Ընթացակարգի համնաժողովի քարտուղարն է Ա. Համբարձումյանը:

Հայտերը կբացվեն 2014 թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 14:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում Քոլեջի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումը:

"Երևանի պարարվեստի պետական քոլեջ" ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի (որոնք կազմված են 53 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 2 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. Գնային առաջարկ (Հավելված N 1.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք հայտի օրինակելի ձևը:

"Երևանի պարարվեստի պետական քոլեջ" ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ armballet@mail.ru:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.Կ. ՄԱՐԿՈՍՅԱՆ